ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» սեպտեմբերի 2013թ. **N-----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ. 580-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Դավթաշեն 1-ին թաղամասի հ.10 շենքի հ.57՝ 64.9քմ. մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 09.04.2013թ. հ.09042013-01-0162 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Սարգիս Գրիգորյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սարգիս Գրիգորյանը դիմել է Երևանի քաղաքապետարան Երևան համայնքի սեփականությունը համարվող Դավթաշեն 1-ին թաղամասի հ.10 շենքի հ.57՝ 64.9քմ. ընդհանուր մակերեսով իր ընտանիքի կողմից զբաղեցրած բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) խնդրանքով:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն ստորաբաժանման ղեկավարի 03.05.2013թ. հ.ԿԽ-2/3113 գրության համաձայն Սարգիս Գրիգորյանի անվամբ Դավթաշեն 10-րդ փողոցի հ.2 հասցեում գտնվող բնակելի տան նկատմամբ գրանցված է համատեղ սեփականություն: ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Դավթաշեն անձնագրային խմբի կողմից 15.05.2013թ. տրված 22/1468 գրության համաձայն՝ Դավթաշեն 10-րդ փողոցի հ.2 հասցեում հաշվառված են 12 անձ:

Համաձայն Դավթաշեն վարչական շրջանի <<Բնակարանային ֆոնդի և կոմունալ տնտեսություն>> ՓԲԸ-ի կողմից 29.07.2013թ. տրված հ.96 տեղեկանքի Դավթաշեն 10-րդ փողոցի հ.2 հասցեում գտնվող բնակելի տանը փաստացի բնակվում են 18 անձ: Թեև Սարգիս Գրիգորյանը հանդիսանալով նշված բնակարանի համասեփականատեր բնակարանային պայմանների կարիքավորությունից ելնելով 2000 թվականից իր ընտանիքով տեղափոխվել են Դավթաշեն 1-ին թաղամասի հ.10 շենքի հ.57 ոչ բնակելի տարածք:

Համաձայն <<Դավթաշեն 1/2>> համատիրության նախագահի կողմից տրված տեղեկանքի, վերջիններս իրենց միջոցներով կատարել են վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ, և 2000 թվականից սկսած վճարել են կոմունալ և սպասարկման վճարումները:

Դավթաշեն վարչական շրջանի <<Բնակարանային ֆոնդի և կոմունալ տնտեսություն>> ՓԲԸ-ի կողմից 10.07.2013թ. տրված տեղեկանքի համաձայն Սարգիս Գրիգորյանի ընտանիքը՝ 5 անձով՝ ինքը, կինը և երեք անչափահաս երեխաները փաստացի բնակվում են Դավթաշեն 1-ին թաղամասի հ.10 շենքի հ.57 բնակարանում:

Երևանի քաղաքապետի 02.04.2013թ. հ.1376-Ա որոշմամբ ոչ բնակելի տարածքի գործառական նշանակությունը սահմանվել է բնակելի և հանվել է ոչ բնակելի ֆոնդից: Ներկայումս նշված հասցեում գտնվող բնակարանը հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 09.04.2013թ. N 09042013-01-0162 վկայական):

Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ.580-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի։

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ.580-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքները, ուստի ք. Երևան, Դավթաշեն 1-ին թաղամասի հ.10 շենքի հ.57 հասցեում գտնվող գույքի անհատույց օտարման մասին որոշումը կարող է ընդունվել միայն Երևան քաղաքի ավագանու կողմից։

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին>> որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ